ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԿԱՅՔԷՋԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուս. տարի

2021-2022 ուս. տարում կրթական հաստատության գործունեության վերաբերյալ հասարակության ամենատարբեր խմբերին լրատվություն է ներկայացվել ինչպես համալսարանի կայքի, այնպես էլ՝ համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով: Օպերատիվ աշխատանքներ են տարվել էլեկտրոնային լրահոսի ստեղծման ու հրապարակման համար, որոնք ընդգրկում են հոբելյանական միջոցառումների, կարևոր այցերի, գիտական մասի գործունեության և կարևոր նշանակություն ունեցող այլ իրադարձությունների վերաբերյալ քարոզչական, ինֆորմացիոն բնույթի նյութեր պատրաստելն ու շրջանառելը:

Համաձայն 2020-2021 ուս. տարում մշակված կայքէջի արդիականացման ուղեցույցի՝ տարվել են համապատասխան աշխատանքներ՝ ներառյալ ընդհանուր բովանդակության և կառուցվածքային փոփոխությունները:

Այս ուսումնական տարում շարունակել եմ ԱԲՀ պաշտոնական կայքէջում նոր կատեգորիաների, էջերի ստեղծումը: «ՈԱ համակարգ» վերտառությամբ ստեղծել եմ որակի ապահովման բաժին, որտեղ ներկայացված են համալսարանում իրականացված ՈԱ ոլորտին առնչվող աշխատանքներ:

Կազմավորված են 5 կատեգորիաներ՝ «Քաղաքականություն», «Պաշտոնի անձնագիր», «Որակի ապահովման գործընթացներ», «Հավատարմագրում», «Ձեռնարկներ և ուղեցույցներ» անվանումներով:

«Որակի ապահովման գործընթացներ» կայքէջի բաժինն իր հերթին բաժանվում է 3 ճյուղերի՝ «Տարեկան հաշվետվություններ», «Ինքնավերլուծություններ», «Հարցումների վերլուծություններ»:

Աշխատանքներ են տարվել ոչ միայն տեքստային բովանդակության, այլ նաև տեսողական /վիզուալ/ դաշտում:

Թարմացվել են «Փաստաթղթեր» բաժնի «Կանոնակարգեր», «Կանոնադրություններ», «Ուղեցույցներ», «Զարգացման ռազմավարական ծրագիր», «Հաշվետվություններ», «Այլ փաստաթղթեր» ենթախմբերը:

Սույն ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից սկսած բազմաթիվ ինֆորմացիոն-տեղեկատվական բնույթի նյութեր են կազմվել և տեղադրվել կայքէջի «Նորություններ և իրադարձություններ», «Հայտարարություններ» բաժիններում:

Ակտիվ է եղել նաև Ավանդական բժշկության համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջը: Վիճակագրական տվյալների համաձայն, եթե 2017 թվականին նյութերի հասանելիության ամենաբարձր սանդղակը եղել է 766-ը, ապա վերջին տարիներին, ըստ գրանցված տվյալների, այդ ցուցանիշը անցել է 10.000-ը: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը՝ ցուցանիշների վրա էապես ազդել են հայերենով և անգլերենով պատրաստված երկու տեսանյութերը:

Աշխատանքներ են տարվում կայքի «Ամբիոններ» ենթաբաժնի համար: Ուսումնասիրվում են ամբիոնների արխիվային տվյալները՝ «Ամբիոնների պատմություն» ենթաբաժնի համար, աշխատանքներ են կատարվել նաև ամբիոնների աշխատակազմի կենսագրական տվյալների հավաքագրման համար:

Կայքէջի պատասխանատու՝ Աննա Ավետյան